# ԹՈՒԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՀՆԱԳՈՅՆ, Թ. ԴԱՐԻ ԽԱՉԱՔԱՆԴԱԿ ՔԱՐ ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՑ

ԱՇՈՏ Գ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ
ashot.manucharyan.1959@mail.ru

Սիւնիքի արձանագրութիւնների լրացուցիչ ժողովածուի կազմման շրջանակներում (աշխատասիրութեամբ Գ. Գրիգորեանի) 2013ի ամռանը շրջագայելով Մեղրու տարածաշրջանում՝ գրանցեցինք մի խաչաքանդակ քար, որը թուագրութեամբ աւելի հին է, քան Թ. դ. թուագիր, ցարդ յայտնի հետեւեալ վեց խաչքարերը.-

853ի Արցախի Մեծարանց Սողոմոն եպիսկոպոսի[1],

866ի Վաղուհաս գիւղի մօտի՝ Սարգսի[2],

879ի Գառնիի՝ Կատրանիդէ թագուհու[3],

881ի Մեծ Մասրիկի՝ Սիւնեաց եւ Աղուանից իշխան Գրիգոր Ատրներսեհեանի[4],

882ի Դաշտադէմի՝ Սուսէի[5]

886ի Կեչուտի՝ Դաւթի[6]:



Նորայայտ խաչաքանդակ քարը[7] գտնւում է Ափկէս[8] գիւղատեղիում, ԺԷ. դ. եկեղեցուց մօտ 500 մ. հիւսիս: Քարը գրանիտ է: Նրա արեւմտեան մակերեսին կերտուած է հինգ խաչապատկեր՝ երկուսը մեծ, կողք կողքի

եւ երեքը՝ փոքր: Դրանցից երեքը՝ մէկ մեծը եւ երկու փոքրերը, հողմահարուած են:

Այն յաւակնում է դասուելու խաչքարերի նախօրինակների շարքին, քանի որ բնութագրելով Հայաստանի վաղ խաչքարային կոթողային յուշարձանները՝ Ստեփան Մնացականեանը գրում է. *«Խաչքարի ընդհանուր կոմպոզիցիոն մշակումը հնագոյն խաչքարերում պարզ, առանց որեւէ պաճուճանքի խաչեր են, քանդակուած հարթ, կիսաշրջանաձեւ աւարտուող սալերի վրայ»*, նաեւ՝ *«Յայտնի է, որ հնագոյն խաչքարերն աչքի են ընկնում իրենց պարզ ու յստակ ձեւերով, ընդ որում հիմնականը, որոշիչը այստեղ բուն խաչի կոմպոզիցիան է, իսկ օժանդակ մոտիւները եւ զարդաձեւերն ունեն անհամեմատ աւելի աննշան ու երկրորդական նշանակութիւն»*[9]:

Մեր կողմից յաւելենք, որ գրանիտը կարծր, դժուար մշակուող քար է, ուստի պատուիրատուն եւ վարպետը բաւարարուել են՝ խաչեր ու հակիրճ յիշատակութիւն թողնելով:

Ափկէսի նորայայտ յուշաքարի խաչապատկերների շուրջ Ռաձեւ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը[10].

⌊Ի⌋ Թ⌊ՈՒԻՆ⌋ ՄՀԶ (827)… / ՍԲ ԽԱՉՍ / ⌈Հ⌉ ՐԱՀԱՏԱ [11]:

Համլէտ Պետրոսեանը նկատել է, որ առաջին խաչքարեր կանգնեցնողների շարքում են պետութեան եւ եկեղեցու մի շարք աչքի ընկնող դէմքեր՝ թագուհի, Արեւելից Կողմանց իշխանը, եպիսկոպոսներ, քահանաներ եւ այլք[12]: Նշանակում է՝ արձանագրութեան մէջ յիշատակուող Հրահատը պէտք է որ իշխան եղած լինի:

Յիշեալ ժամանակաշրջանում պատմական աղբիւրներից Հրահատ անունով յայտնի է չորս իշխան.-

1. Տաթեւի 839ի վաւերագրում, որով Սիւնեաց տէր Դաւիթ եպիսկոպոսը (836-853) 10.000 դրամով նահանգի գահերէց իշխան Փիլիպէ Ա.ից (821-844) գնում է Արծիւ եւ Բերդկաներիչ գիւղերը. որպէս գործարքի վկայ յիշատակւում է նաեւ տէր «*Հրահատ՝ տեառն Սահակայ որդի*»[13]:

Հայկարամ Ութմազեանն այս Հրահատին համարում է որդին Գեղարքունիքի տէր, գահակալ իշխան Սահակի, ով զոհուել էր Կաւակերտի ճակատամարտում 831/832ին[14]:

Հետեւապէս այս Հրահատը չէր կարող լինել Ափկէսի խաչքարում յիշատակուող անձը, քանի որ նրա տիրոյթները գտնուել են Գեղարքունիքում:

2. Սիսական տոհմի Գեղարքունեաց ճիւղում հանդիպում ենք Հրահատ անունով մէկ ուրիշ իշխանի, ով եղբայրն էր նշանաւոր Վասակ Գաբուռի (851-859) եւ որդին Գրիգոր Ա. Սուփանի (832-851): Նա հանդէս է

գալիս Թ. դարի վերջին քառորդում՝ 874ի Շողուագավանքի վաւերագրում իր հօրեղբօր՝ Գեղարքունեաց Գաւառի գահակալ իշխան Գագիկի հետ[15]:

3. 844ի ընծայագրում, որով Սիւնեաց գահերէց իշխան Փիլիպէն Տաթեւի վանքին է նուիրաբերում իր սեփական համանուն գիւղը, վկաների շարքում ներկայ են *«Տէր Հրահատ եւ Գագիկ՝ որդիք Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն»*[16]:

Սիւնեաց տէր Գրիգորը, ըստ Ութմազեանի, չէր կարող Գեղարքունիքի տէր Սուփան Ա.ն լինել, քանի որ նա Գագիկ անունով որդի չի ունեցել[17]: Նրա որդիները Վասակ Գաբուռն ու Հրահատն էին: Հետեւապէս, ըստ պատմաբանի, նա 881ին յիշատակուող իշխանաց իշխան Հրահատն է[18]:

Այդ թուականին, Սիւնեաց տէր, իշխանաց իշխան Հրահատը՝ Գրիգորի որդին, ըստ Սողոմոն եպիսկոպոսի (863-880) վաւերագրի, Տաթեւի վանքին է յանձնել իր հայրենի Դարատափ գիւղը[19]: Կարծում ենք, որ նա չէր կարող Ափկէսի խաչքարի Հրահատը լինել, քանի որ ժամանակային վիհ կայ 827 եւ 881 թուականների միջեւ՝ 54 տարի, եւ որ իշխանը 827ին շատ երիտասարդ պէտք է լինէր, ուստի դժուար թէ կարողանար կոթող կանգնեցուելու պատուին արժանանալ:

4. Տաթեւի նոյն 844ի ընծայագրում վկաների մէջ են *«տէր Հրահատ եւ տէր Արուման՝ Սահակայ որդիք»*[20]: Ստեփանոս Օրբէլեանը նշում է, որ նոյն 844ին տեսնելով Սիւնեաց գահերէց Փիլիպէի նուիրատուութիւնը՝ մեծ իշխան Հրահատը՝ Սահակի որդին եւ Գրիգոր Արումանի եղբայրը, Հայկազուն, նոյն Սիսական տոհմից, որ *«ունէր իր բաժին ժառանգութեան զԿովսական գաւառ եւ զՔաշունիք»*, գնում է տէր Դաւիթ եպիսկոպոսի մօտ եւ Տաթեւի վանքին ընծայում Կովսական Գաւառի Նորաշինիկ անունով գիւղը՝ *«իւր բոլոր սահմանօք, լերամբ եւ դաշտաւ, ջերմաւ եւ ցրտով, ծառով եւ տնկով...»*[21]:

Այս նոյն Հրահատը յիշատակւում է նաեւ իր տիկնոջ՝ Քուպղիդուխտի 867ի նուիրագրում[22]: Քուպղիդուխտը դուստրն էր Սիւնեաց մեծ նահապետ, իշխանաց իշխեցող Վասակի (մհ. 821) եւ քոյրը գահերէց իշխան Փիլիպէի (821-844): Իշխանուհին արդէն ծեր էր, ինչպէս ինքն է ասում՝ *«.. մերձեցայ ի ժամանակս ծերութեան»*[23], երբ Տաթեւի վանքին է նուիրաբերում իր Մաճ գիւղը՝ լեռներով, դաշտերով, մարգով եւ այգով, ջրով ու ցամաքով, ծառերով ու տունկերով:

Այն, որ Քուպղիդուխտի ամուսին Հրահատ իշխանը Սահակի որդի ու Գրիգոր Արումանի եղբայր Հրահատն է, ինչպէս նշում է Ութմազեանը, ակնբախ է հետեւեալ երեք փաստերից.

ա) Մաճը գտնւում էր Քաշունիքում, որի տէրը Հրահատն էր:

բ) Երկուսն էլ գանգատւում են անզաւակութիւնից. Քուպղիդուխտ իշխանուհին իր 867ի ընծայագրում տրտնջում է, որ *«զրկեալ էի ի զաւակէ*

*մասանց»*[24], իսկ Հրահատ իշխանը 844ի նուիրագրում նշում է. *«զմտաւ ածեալ զանզաւակութիւնս իմ..»*[25]:

գ) Երկուսն էլ խօսում են Հրահատի գործած ինչ-որ մեղքերի ու յանցանքների մասին: Իշխանուհին, որպէսզի հաստատուն պահի Տաթեւի վանքին իր կատարած նուիրատուութիւնը, վճիռը խախտողներին սպառնում է Աստուծուց եւ Ս. Խաչից դատապարտմամբ, ինչպէս նաեւ նզովքով հոգեւոր տէրերի, ծնողների, եւ *«տեառն Հրահատայ, որ իմ կենաց կցորդն էր զամենայն մեղս եւ զյանցանս Աստուած ի նմանէ տուժեսցէ»*[26]: Հրահատը 844ի Նորաշինիկի կտակագրում խոստովանում է. *«Ես Հրահատ բազմամեղ՝ երանելի տեառն Սահակայ որդի, վասն իմ չար եւ անիրաւ գնացից, որ որսացեալ էի ի սատանայէ բազում եւ ազգ ազգի յանցանօք եւ լցեալ իբրեւ զծով անթիւ չարեօք ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահեղ աւուր դատաստանին..»*[27]:

Ըստ Ութմազեանի, այս Հրահատը 867ին արդէն վախճանուել էր[28]:

Մենք այս բազմամեղ իշխանին համարում ենք Ափկէսի նորայայտ խաչքարի արձանագրութիւնում յիշատակուող Հրահատը: Նախ՝ ժամանակները լիովին համընկնում են, երկրորդ՝ նրա տիրոյթներից Կովսականը հարաւ-արեւմուտքից սահմանակից էր Արեւիք Գաւառին[29], որի արեւելեան մասում է գտնուել Ափկէս գիւղը: Չի բացառում, որ Թ. դ. սկզբներին Արեւիք Գաւառի արեւելեան՝ Ափկէս-Թոս-Վերին Մալեւ-Քուջերթ հատուածը ներառուած լինէր Կովսականի եւ Քաշունիքի տէր, Հրահատ որդի Սահակի տիրոյթներում, միաժամանակ ենթադրելով, որ, հնարաւոր է՝ իշխանը դրանց տիրացած լինէր բռնութեամբ, այսինքն՝ յանցաւոր ճանապարհով, մեղք գործելով, ինչը բնութագրական էր նրան:

Ուշագրաւ է Պետրոսեանի այն դիտարկումը, թէ *«Խաչքարերը երեւան եկան արաբական լծի թուլացմանը զուգահեռ, աննկատից դէպի նկատելին, համեստից դէպի ճոխը սկզբունքով, դառնալով մի տեսակ քաղաքական-դաւանական տեղաշարժերի արձագանգը: Հազիւ թէ պատահականութեան արդիւնք է այն իրողութիւնը, որ առաջին թուագիր խաչքարերը համապատասխանում են Արաբական Խալիֆայութիւնից Հայաստանի քաղաքական անկախութիւն ձեռք բերելու ժամանակին.. Ինչ որ իմաստով խաչքարը հանդէս եկաւ որպէս վերականգնուող հայկական պետութեան ինքնութեան խորհրդանշան եւ նրա զարգացումն էլ սկզբնական շրջանում պիտի որ աւելի «զգայունօրէն» արձագանգէր տարածաշրջանում եւ երկրում տեղի ունեցող քաղաքական-դաւանական փոփոխութիւններին»*[30]:

Ապա, անդրադառնալով Քոլատակի Մեծարանց եւ Վաղուհասի թուագիր երկու հնագոյն խաչքարերին (853 եւ 866) Պետրոսեանը եզրակացնում է, որ *«Արցախը ոչ միայն ներառուած էր խաչքարակերտման գործընթացի մէջ, այլեւ հնարաւոր է, որ որոշ քայլեր*

*այստեղ, կապուած քաղաքական իրավիճակի հետ, աւելի վաղ կարող էին տեղի ունենալ»*[31]:

Հնագէտի այս որակումն աւելի յատկանշական է Սիւնիքի համար, քանի որ, այն ժամանակ, երբ Արցախում երկրամասի բնիկ տէրեր Առանշահիկ իշխաններն ի դէմս հզօրագոյն Սահլ Իբն Սումբատի (Թ. դ. Ա. կէս) զբաղուած էին իրենց աւատական խլուած իրաւունքների վերականգնմամբ, նոյն միջոցին Սիսական աշխարհում գործում էր կառավարման կայացած համակարգ՝ գահերէցութեան եւ գահակալութեան կուռ կառուցուածքով:

Բայց եւ այնպէս, այդ ծայրամասային երկու հզօրացած նահանգների, նաեւ Վասպուրականի, եւ ինչպէս հայրենասէր պատմիչն է յաւելում, հայոց միւս իշխանների՝ ուժեղ կենտրոն Շիրակ-Այրարատի շուրջ համախմբուելու շնորհիւ էր, որ վերականգնուեց Հայաստանի պետականութիւնը[32]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. V, Արցախ*, կազմեց Սեդրաք Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 12: Խաչքարը չկայ, նրա մասին արձանագրութիւնը փորագրուած է պատուանդանին:

[2] Նոյն, էջ 113:

[3] Babken Arakelian, *Garni, Tom I, Rezultatei Raskopok 1949-1950 gg*. (Գառնի, Հտր. 1, 1949-1950 թթ. պեղումների արդիւնքները), Երեւան, 1952, էջ 84: Կատրանիդէն կինն է Աշոտ Ա. Բագրատունի արքայի (885-890), ով Սեւանի 874ի վիմագրում երկիցս յիշատակւում է որպէս թագաւոր (Կարօ Ղաֆադարեան, *Հայկական Գրի Սկզբնական Տեսակները*, Երեւան, Արմֆան, 1939, էջ 68):

[4] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու Եւ Վարդենիսի Շրջաններ,* կազմեց Սեդրաք Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 334:

[5] *Հայաստանի Միջնադարեան Կոթողային Յուշարձանները. IX-XIII դդ. Խաչքարերը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 14:

[6] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. III, Վայոց Ձոր. Եղեգնաձորի, Ազիզբեկովի Շրջաններ*, կազմեց Սեդրաք Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 21: Ըստ Ա. Շահինեանի, Թ. դարից են նաեւ այն երկու որմնախաչերը, որոնցից մէկը զետեղուած է Տաթեւի վանքի Ս. Պօղոս-Պետրոս կաթողիկէի արեւմտեան մուտքից վերեւ, այդ տաճարը կառուցող Յովհաննէս եպիսկոպոսի յիշատակութեամբ, որը թէեւ թուական չունի, բայց թուագրւում է սրբարանի շինութեան ժամանակով՝ 895-906, իսկ միւսը ներկայիս Գեղարքունիքի Մարզի Հացառատ Գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան պատին ագուցուած անարձանագիր խաչքարն է, որի թուագրութիւնը որոշւում է աղօթարանի կառուցմամբ՝ 898-899 թթ. (*Հայաստանի Միջնադարեան Կոթողային*, էջ 15):

[7] Դէպի խաչքար դժուարանցանելի, վթարավտանգ, վաղուց աչքաթող արուած ճանապարհով մեզ առաջնորդել են Պատմական Միջավայրի Պահպանութեան

Սիւնիքի Մարզային Ծառայութեան պետի տեղակալ, պատմաբան Ն. Հայրապետեանը եւ ազատամարտիկ Գ. Պօղոսեանը, որոնց յայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը:

[8] Տաթեւի վանքին հարկատու գիւղերի ցուցակում յիշատակւում է Աբգավանք՝ 8 միաւոր հարկաչափով (Ստեփանոս Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, Տպ. Աղանեան, 1910, էջ 521):

[9] Ստեփան Մնացականեան, *Հայկական Ճարտարապետութեան Սիւնիքի Դպրոցը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1960, էջ 177:

[10] Նոյն, էջ 174:

[11] Քարի վրայի անունը փորձել ենք կարդալ ԱԲՐԱՀԱՄԱ, բայց այդ դէպքում չեն նշմարւում ԱԲ տառերի կամ կցագրերի հետքեր, այլ դրանց փոխարէն երեւում է Հի տառահետք: Այն նման է ՀՐԱՀԱՏ անուան երկրորդ Հին: Ինչ վերաբերում է բառի նախավերջին տառին, որը նման է Մի, ապա այն Տ ենք կարծում, գտնելով, որ վերեւից իջնող նրա փոքր մասնիկը ջնջուած է, ինչպէս ՀՐԱՀԱՏ անուան վերջին Ա տառի աջ սիւնագծի վերնամասը:

[12] Համլէտ Պետրոսեան, *Խաչքար: Ծագումը, Գործառոյթը, Պատկերագրութիւնը, Իմաստաբանութիւնը*, Երեւան, Փրինթինֆօ, 2008, էջ 95:

[13] Օրբէլեան, էջ 205:

[14] Հայկարամ Ութմազեան, *Սիւնիքը IX-X Դարերում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1958, էջ 309:

[15] Նոյն, էջ 312. նաեւ՝ Օրբէլեան, էջ 175:

[16] Օրբէլեան, էջ 215:

[17] Ութմազեան, էջ 318:

[18] Նոյն:

[19] Օրբէլեանի հարկացուցակում Դարատափ չի յիշատակւում (Օրբէլեան, էջ 509-523): Ութմազեանը գրում է, թէ Դարատափի տեղադրութիւնը յայտնի չէ, որով հնարաւոր կը լինէր որոշել իշխանաց իշխան Հրահատի՝ որդի Գրիգորի՝ Սիւնեաց տեառնի բուն տիրոյթները (Ութմազեան, էջ 319), չնայած մի այլ տեղ հաւանական է համարում դրանց գտնուելը Սիւնիքի հարաւում (նոյն, էջ 26): Խիստ գայթակղիչ կը լինէր Դարատափի նոյնացումը Մեղրու տարածաշրջանի նախկին ադրբեջանաբնակ Ալդարայի հետ (ներկայիս Ալվանք): Տեղանունների բառարանում Դարատափը տեղադրւում է կամ Բաղք կամ Կովական գաւառներում (Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 2*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 55-56): Ըստ Ալիշանի, Դարատափը եղել է Խոտ գիւղի մօտ (Հայր Ղեւոնդ Ալիշան, *Սիսական,* Վենետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 227): Իսկ Խոտ գիւղը Ութմազեանը տեղադրում է Հաբանդ Գաւառում (Ութմազեան, էջ 295):

[20] Օրբէլեան, էջ 207:

[21] Նոյն, էջ 208-211: Նորաշինիկը, ըստ Ա. Աբրահամեանի, Ղափանի շրջանի մէջ մտնող Նորաշէնիկ գիւղն է (Ստեփանոս Օրբէլեան, *Սիւնիքի Պատմութիւն*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան, 1986, էջ 466): Քաշունիքը Սիւնիքի գաւառներից էր, որը որպէս վարչական միաւոր կազմաւորուել է Ը. դ. վերջերին՝ Բաղքի մաս-

նատմամբ: Սահմանակից էր Սիւնիքի Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Կովսական եւ Արցախի Միւս Հաբանդ գաւառներին (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 5*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 300):

[22] Օրբէլեան, էջ 220:

[23] Նոյն, էջ 219: Մաճ գիւղը գտնուել է Միւս Բաղք կամ Քաշունիք Գաւառում՝ 7 միաւոր հարկաչափով (Օրբէլեան, էջ 519): Այն եղել է Կապանի Առաջաձոր գիւղի մօտ, ինչպէս պարզել է Գ. Գրիգորեանը (տե՛ս՝ նրա «Պատմական Սիւնիքի Մի Շարք Գիւղերի Տեղադրութեան Շուրջը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1966, № 4, էջ 236ղ նաեւ՝ Օրբէլեան, *Սիւնիքի Պատմութիւն*, Ա. Աբրահամեանի ծանօթութիւնը, էջ 468):

[24] Օրբէլեան, էջ 219:

[25] Նոյն, էջ 209:

[26] Նոյն, էջ 220:

[27] Նոյն, էջ 209:

[28] Ութմազեան, էջ 321:

[29] Տե՛ս՝ *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հտր. 5*, Երեւան, ՀՍՍՀ Յ. Մեղապարտի Տպ., 1979, էջ 637, նաեւ՝ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 3*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1991, էջ 223:

[30] Պետրոսեան, էջ 95:

[31] Նոյն, էջ 97:

[32] Օրբէլեան, էջ 175:

## THE OLDEST 9TH-CENTURY-INSCRIBED *KHATCHKAR* (CROSS-STONE) FROM THE MEGHRI REGION (SUMMARY)

ASHOT G. MANUCHARYAN
ashot.manucharyan.1959@mail.ru

There are only six *khatchkar*s (cross-stones) with date inscriptions that go back to the mid-9th century. These *khatchkar*s are found both in Armenia and Artsakh and are dated between 853 and 886.

The author reports on a newly found *khatchkar* that bears the inscription ‘HRAHAT’ and dates back to 827. The *khatchkar* was discovered in the summer of 2013 in the village of Apkes, Meghri region of Syunik.

The author describes the *khatchkar*, decodes the inscription and identifies the inscribed name, Hrahat, as the prince Hrahat Sahakyan. He was the ruler of the provinces of Kovsakan and Kashoonik, which bordered Arevik province in the south-west, now the Meghri region of the Republic of Armenia.